

ԵՐԿՈՒ ԺԱՄ... ՎԻՏԵՆԲԵՐԳԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ

(Մի պատարիկ ուսանողական գրառումներից)

Եվս մի քննութիւնն եւրոպական թատրոնի պատմութիւնից, և կավարտենք ինստիտուտը: 1952-ի հունիս: Հավաքվել ենք ուսանողական վերջին պարապմունքին: Մեր առջև կան Քալանթարն է:

— Ինչի՞ մասին խոսենք, տղաներ,— հարցնում է նա՝ ավելի շուտ աղջիկներին դիմելով: Աղջիկներից մեկն էլ իսկույն պատասխանում է.

— Լոպե դե Վեգայի:— Մեկ ուրիշը թե՛ Մեյնինգենյան թատրոնի: Հետո խնդրում են ֆրանսիական կլասիցիզմի կամ էլեոնորա Դուզիի մասին զրուցել: Ի վերջո Շեքսպիրի անունն են տալիս:

— Շա՛տ մեծ թեմա է,— ասես ահաբեկված բացականչեց Քալանթարը:

— Գուցե նրա լավագույն պիեսի, միայն «Համլետի» մասին...

— Էլի՛ մեծ նյութ է, շա՛տ մեծ, մի պարապմունքով չենք սպառի: Թերևս... — կմկմաց կան Ալեքսանդրովիչը՝ ինչ-որ բան մտաբերելով,— խոսենք Համլետի... ա՛յ, ասա դու,— մատնացույց անելով ինձ՝ հարցրեց նա,— որտեղի՞ց էր եկել Համլետը հոր թաղման ծիսակատարութեանը մասնակցելու և ի՞նչ էր անում այնտեղ:

— Վիտենբերգից,— պատասխանեցի մեքենաբար:

— Հա՛, սովորում էր համալսարանում: Ի՞նչ էր սովորում, ումի՞ց, ինչպիսի՞ պայմաններում: Չգիտե՛ք: Խոսենք ահա այդ մասին:

Եվ սկսեց: Ուղղակի, առանց այլևայլութեան մտնելով բուն նյութի մեջ: Ասես պատմում էր երեկվա անցուղարձի, մտերիմ մարդկանց և շատ հանրահայտ վայրերի և երևույթների մասին:

Վերածննդի դարաշրջան: Հումանիզմ, Ի՞նչ ակունքներ ունենի դրանք: Մեր պատկերացումները բավական ազոտ և շատ միակողմանի էին այդ ամենի մասին: Որտեղի՞ց էր գալիս և ինչպե՞ս էր ներծծվել հումանիզմը Համլետի էություն մեջ: Ի՞նչ բնույթ ունենի Համլետի պայ- բարը, նրա անհաշատողականությունը, Հոգեկան և բաղաբական ի՞նչ շարժառիթներ էին սերմանել նրա մեջ ճշմարտությունն անվարան բա- ցահայտելու ծարավ, հոգեբանական սրսուսումներ, մարդկային ստո- րաբարշտության հանդեպ ասելություն:

Ավելի հուզող, հետաքրքրական դրույց մեր այն ժամանակվա գի- տելիքների սահմաններում չէինք կարող ակնկալել:

— Մանենք Վիտենբերգի համալսարան,— ասում էր Լ. Քալան- թարը և մեկ ասնում ետեից:— Ի՞նչ էին ուսուցանում այնտեղ, փիլի- սոփայություն, ճշգրիտ գիտություններ, բրիտանոհա-կրոնական միտք, լեզուներ, գրականություն, ղեղարվերտ... գիտելիքների մե՞ծ պաշար, համամարդկային վսեմ իղեալներ: Եվ պատանին ստանում էր համա- կողմանի կրթություն, ի՞նչ կրթություն,— ասում էր նա իրոք ցավելով, որ ինքը Համլետի կողքին, նույն համալսարանում չի սովորել:

Լեոն Քալանթարի մտավոր բարձր կարողությունները, որ մինչ այդ մեկ անմատչելի էին եղել, այդ անգամ մեկից դուրս ժայթքեցին, և մեկ թվաց, որ նա թարնված էր եղել մեղանից, որ իսկական Լեոն Քալանթարին մենք նոր ենք ըմբռնում: Նա տարիների ընթացքում իր կարգացած և չկարգացած դասախոսությունները կարճեա կամենում էր մեն-մի պարապմունքով ամփոփել: Բոլոր թիրացումների, ուշացում- ների համար լիառատ փոխհատուցել և ապա նոր միայն մաղթել բարի- րիթ: Բայց դա միայն Լեոն Քալանթարը չէր, մեկ վաղուց ծանոթ ու սիրելի դասախոսը: Համլետն էր գլուխ բարձրացրել նրա մեջ, հավի- տենական առեղծվածը, որ մենք կրում ենք մեր մեջ, թվում է ի սկզբ- բանի: Նա խոսում էր տառապած ու տառապող Համլետի շուրթերով, բայց ավելի տառապած, որովհետև հանդարտամիտ էր, ո՞ճը խաղաղ, անհանգստության ոչ մի արտաբեր զրսեղորում:

Համլետի կյանքի ուղին մինչև հոր մահվան գույժն առնելը: Այս էր դրույցի հիմնական թեման, որ նրան առանձնապես կլանել էր և հուզել: Խոսքը Վիտենբերգի համալսարանի մասին էր, սկզբում մի- միայն համալսարանի: Անդրադառնում էր քարոզած զաղափարներին, ասածը համեմում Շեքսպիրին ժամանակակից տարբեր փիլիսոփաների և գրողների ասույթներով, լուսաբանում հոգևոր դաստիարակության

հետ առնչվող նույնիսկ մանկավարժական հարցեր, զրուցում կրոնական արարողությունների, նրանց բնույթի և իմաստի շուրջ, վերականգնում կենցաղը և կենցաղագրական որոշ մանրամասներ: Ու դարմանում էինք, որ առանց այդ բոլորը գիտենալու, մենք հանդգնել ենք Շեքսպիրին մոտենալ և դատողություններ անել «Համլետի» շուրջը:

Այդ միջոցին պատկերացնում էինք «Համլետը» բեմի վրա. մի-միայն բեմի: Ունեցել էինք Ադամյան, տեսել Փափաղյանին, նաև վաղարշյանին: Մեզ բեմ էր պետք... Մեր աչքի առջև խաչաձևվում էին սյուսետային տարբեր գծեր, իմաստավորվում զանազան կերպարներ, որ առաջ անտես էին մնացել, մտովի վերընթեռնում էինք պիեսի այլև-այլ սրաթև ասուլիսներն ու դիալոգները, մի խոսքով՝ ամբողջ ողբերգու-թյունը, չնայած որ Քալանթարն այդ մասին կոնկրետ ոչինչ չէր ասում: Կարծես մոռացել էր Համլետին, նույնիսկ անունն էլ չէր տալիս, պատ-մում էր համալսարանական կյանքի, ուսանողական խմորումների, պայ-ծառ երազանքի մասին: Խոսում էր. ասես իր բարեկամներին, ընկեր-ներին էր վերհիշում: Շեշտում էր, թե ինչպես դասախոսները հիանալի գիտեին անտիկ մշակույթը, բժշկագիտությունը, լատիներենը, ինչպես էին ապրում, ինչ էին կարդում և ինչ հանձնարարում իրենց սաներին: Գրադարանի պարունակությունն էլ չէր մոռացել: Զարմանալի բան. կարդացած, լավ ծանոթ նյութը հանկարծ թվաց չկարդացած: Ուաման մեծ ծարավ զգացինք¹:

Երբեմն Քալանթարն ընդհատում էր իր խոսքը, — պարզ է հիմա, հարցումով, — որին դարձյալ ինքն էր պատասխանում. բացատրում, թե ինչու Համլետը կարող էր Օֆելիային սիրել քառասուն հազար եղբայր-ների սիրով և, այնուամենայնիվ, խույս տալ նրանից, ինչո՞ւ նա Լահր-տի նկատմամբ ատելություն չուներ, ինչո՞ւ յուրաքանչյուր քայլափոխին պիտի ծաղրեր Պոլոնիոսին, Գիլդենշտերնին և Ռոզենկրանցին, ինչո՞ւ գերեզմանատան տեսարանում կարեկցանքով պիտի հիշեր Յորիկին: Վերջապես, ժամանակն իր շավղից դուրս էր սայթաքել Համլետի աչ-քին, և ինչո՞ւ նա այդքան խորն ու ցավագին պիտի վերապրեր ճակա-տագորի ծանրությունը՝ ժամանակը վերատին հունի մեջ գցելու գեր-մարդկային ճիգը: Ուսանելիս, Համլետը մի բան էր սովորել, դավանել էր արդարամտության և ազնիվ գաղափարների, սակայն իրականու-թյունը հակադրվեց դրանց, եկավ փշրելու նրա մեջ երազանք ու հավատ: Համլետի ողբերգության սկիզբը... այս պարզ, առաջին հայացքից դու-րին ձևակերպվող միտքը նա մատուցում էր շատ պատկերավոր նրբե-

րանդներով, Հեռավոր ու բարդ մի աշխարհ թվում էր մտախի ու մատ-
չելի:

Աշխարհզոգացողությամբ ներդաշնակ, հասարակական հայացքնե-
րով անբասիր, հավատամքով աներեք ուսանող Համբարձին Լ. Քալան-
թարբ բերում կանգնեցնում էր ողբերգության շեմին, կապում նրան
Շեքսպիրի հեռ անխզելի թելով, ապա նորից ետ վերադառնում դեպի
Վիտենբերգ, համալսարանը: Մի այլ ճանապարհով Շեքսպիրն էր Համ-
բուրգի զգեստով Վիտենբերգ մտնում, նստում ուսանողական սեղանի
մոտ, երազում ապագան: Այդ օրը նա մեզ ստիպեց Գաննամարբաչի իշ-
խանին տեսնել որպես թեթևասիրտ պատանի, բունն ողևորութունների,
կրքոտ վեճերի մեջ, ազնիվ ու վեհոգի: Մեկ էլ Վրկին մի ոստյունով
նրան բուն ողբերգության աչք կամ այն հերոսի կողքին էր դնում, բա-
ցում տարբեր փոխհարարերությունների մեջ: Մենք լսում էինք աղեկեղ
մի ձայն ուրվականի հասից, տեսնում սոսկահար մարդու դեմքը:
Սրանց հեռում էր Համբուրգի մենախոսություններից առնված որևէ ար-
տահայտության անսպասելի վերլուծությունը:

Լ. Քալանթարբ «Համբարձին» մասնագիտորեն մերձենալու ուղիներ
էր ցույց տալիս, մե՛կ, որ Շեքսպիրից «անկախ», Շեքսպիրից առաջ
Համբուրգ կրում էինք մեր մեջ: Թվում է, նա կարգում էր նոր հայտնա-
գործած մի ձևագիր, որ կարող էր լինել «Համբարձին» անհայտ առաջա-
բանը՝ ստեղծված մեսրոպյան գրերով: Ո՞վ գիտե, Քալանթարբի միտքը
ուր էր թռչում:

...Ձեմ հիշում ինչպե՛ս ավարտվեց այդ զրույցը կամ ավարտվե՞ց,
արդյոք: Բայց մենք թողինք լսարանը, երկու ժամով դարձած Վիտեն-
բերգի հայ ուսանողներ:

Ն Ա Ն Ո Ւ Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

1. Այդպիսին էր Առն Քալանթարբ, որպես դասախոս, այլ առիթներով, նա նույնպիսի
ինքնամոռացությամբ խոսում էր ն. Մառի, Հ. Օրբելու կամ հնդկական ավանդու-
թյունների մասին. մի անգամ էլ ուսանողներից մեկի խնդրանքով «Ողբականից»
ամբողջ մի հատված արտասանեց հին հունարենով, ցույց տալու համար Հոմերոսի
օգտագործած բանաստեղծական այն հնչերանդները, որոնք արտացոլվել են
Վ. Տերյանի և Պուշկինի տաղաչափական արվեստում: